460

1. Տէ՛ր, Դու փրկեցիր ինձ դաժան մահից,
Ձեռքդ մեկնեցիր, հանեցիր ճահճից,
Դու ողորմեցիր ինձ պես ոչնչին
Ու ցույց տվեցիր ճշմարիտ ուղին:

2. Քո ողորմությունը մեծ է, Տէ՛ր Աստված,
Իմ անձը դարձավ մի տաճար սրբված,
Մտիր սրտիս մեջ՝ ապրիր, սուրբ Աստված,
Ու մաքրիր սիրտս՝ պղծությամբ լցված:

3. Քեզ պիտի պաշտեմ իմ ամբողջ կյանքում,
Քո մասին երգեմ սաղմոսներ բազում,
Տէ՛ր, Քո մեծ փառքը պիտի քարոզեմ
Եվ Քո սուրբ ճամփան շատերին հայտնեմ:

4. Քո աջը թող միշտ հովանի լինի,
Սիրտս փափագով ու սիրով լցվի:
Դու անօրենից ինձ հեռու պահիր,
Թող սուրբ անունդ միշտ փառավորվի:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025